ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական ծրագրի նպատակն է մագիստրոսներին գիտելիք փոխանցել գովազդային գործունեության կառավարման էության, մեխանիզմի և սկզբունքների, իրադարձությունների մարքեթինգի և անհատների բրենդավորման գործընթացի կազմակերպման և առաջխաղացման ուղղությունների, հասարակության հետ կապերի, նեյրոմարքեթինգի և իրացման խթանման գործիքների, ինչպես նաև ուղղակի մարքեթինգի (Direct Marketing) գործիքների, մասնավորապես՝ դրանց ընտրության, կիրառման և արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների վերաբերյալ:

Ծրագրի տևողությունը
2 տարի

Դասապրոցեսը
շաբաթական 3 անգամ
13:40 – 18:00

Ուսման վճարը (տարեկան)
620.000 ՀՀ դրամ

Որակավորում
կառավարման մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կուրս, առաջին կիսամյակ

1.Գիտական հետազոտության մեթոդաբանություն
2.Բիզնես օտար լեզու
3.Մարքեթինգային տեղեկատվական համակարգեր
4.Էկոնոմետրիկ մոդելավորում
5.Սոցիալական մարքեթինգ
6.Ռազմավարական մարքեթինգ
7.Թվային մարքեթինգ
8.Մարքեթինգային հաղորդակցությունների կառավարում

առաջին կուրս, երկրորդ կիսամյակ

1.Բիզնես օտար լեզու
2.Տնտեսագիտության փիլիսոփայություն
3.Գովազդի կառավարում
4.Ռիթեյլ մարքեթինգ
5.Գործարար հաղորդակցում
6.Հաղորդակցման տեխնոլոգիաներ
7.Մերչնդայզինգ

երկրորդ կուրս, առաջին կիսամյակ

1.Անհատների և իրադարձությունների մարքեթինգ
2.Ուղղակի մարքեթինգ
3.Հասարակայնության հետ կապեր (PR)
4.Մեդիաէկոնոմիկա
5.Նեյրոմարքեթինգ

Գիտամանկավարժական փորձառություն
(տևողությունը՝ 6 շաբաթ)

երկրորդ կուրս, երկրորդ կիսամյակ

1.Մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն

Գիտահետազոտական փորձառություն
(տևողությունը՝ 10 շաբաթ)

Վադիմ Գրիգորյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

Կրթական ծրագրի ղեկավար

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնում դասավանդում է 2009 թվականից: 2012-2018 թվականին աշխատել է Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում որպես դեկանի տեղակալ: Մասնակցել է Erasmus+-ի “Educational for Drone” միջազգային ծրագրին, որի շրջանակներում վերապատրաստվել է Իտալիայում և Բելառուսում: Մասնակցել է Բարձր տեխնոլոգիաների նախարարության և ՀՊՏՀ կողմից իրականացրած «Ներուժ» աքսելերացիոն ծրագրին որպես ստարտափների մենթոր: Հեղինակ 17 գիտական և ուսումնական հրապարակումների:

Արմեն Գրիգորյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

2024թ. մարտի 20-ից՝ ՀՊՏՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, 2019-2024թթ.՝ ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր 2011 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի դոցենտ:
2016-2019 թթ.՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, տնօրեն:

Լիլիթ Դադայան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

2011 թվականից առ այսօր հանդիսանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի ամբիոնի դոցենտ: 2019 թվականից ՀՊՏՀ ռեկտորի՝ ուսանողների հետ աշխատանքների գծով խորհրդականն է: Վերջին տարիներին Իսպանիայում, Խորվաթիայում, Իտալիայում և այլ երկրներում մասնակցել է մի շարք միջազգային փոխանակման ծրագրերի և վերապատրաստումների:

Լիլիթ Քոլյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

2013 թվականից մինչ օրս ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսական գիտությունների թեկնածու: Հեղինակ և համահեղինակ է տասնյակից ավել գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկի: Ունի մասնագիտական փորձառություն կաթնամթերքի շուկայում և ռեստորանային բիզնեսում: Իրականացրել է թրեյնինգներ պետական և մասնավոր կազմակերպությունների աշխատակիցների համար: Մասնագիտական նախապատվություններն են նեյրոմարքեթինգը, կայուն մարքեթինգը և մարքեթինգային որոշումները:

Գոռ Կարապետյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

«Targeting» և «Simple Business Academy» ընկերությունների համահիմնադիր եւ գործադիր տնօրեն: Վերջին շրջանում ակտիվ սոցիալական գործունեություն է ծավալում ՀՀ տարբեր մարզերում՝ դեռահասների և երիտասարդների շրջանում մասնագիտական կողմնորոշման և առաջնորդության զարգացման նպատակով: Հեղինակային գրքերն են՝ Հաջողության թաքնված կողմը և «Proակտիվ առաջնորդը»

Լիլիթ Գալստյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

2013 թվականի սեպտեմբերից առ այսօր՝ ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի Մարքեթինգի ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ: 2002-2005թթ աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության Մակրոտնտեսական ծրագրավորման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, 2005-2011թթ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համակարգման և մոնիտորինգի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 2011-2014թթ. ՀՀ ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության Արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: Մասնակցել է վերապատրաստումների և գիտաժողովների Հայաստանում, Ավստրիայում և Ղրղզստանում:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Մարինե Նիկողոսյան

LinkedIn **հարթակում անձնական էջի** **հղումը**

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1987թ. ՀՀ Թեթև արդյունաբերության աշխատանքի գիտական կազմակերպման կենտրոնում որպես տնտեսագետ, այնուհետ 1992 թվականից առ այսօր աշխատում է ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնում սկզբում որպես ավագ լաբորանտ, 2000 թվականից ՝դասախոս, 2010 թվականից առ այսօր՝ որպես դոցենտ: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատանքների, որպես մասնագետ ընդգրկված է եղել ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մի շարք նախագծերում:

Սիմոն Իսկաջյան

LinkedIn **հարթակում անձնական էջի** **հղումը**

Ունի մարքեթինգի ոլորտում 10 տարվա աշխատանքային փորձ: Աշխատել է Մոսկվայում և Երևանում գործող տարբեր առևտրային ընկերություններում որպես մարքեթինգի մասնագետ, մարքեթինգի բաժնի ղեկավար, փոխտնօրեն: 2019 թվականից մինչ այսօր աշխատաում է ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնում որպես դոցենտ: Հեղինակ է 3 մենագրության և 43 գիտական հոդվածի:

Նելլի Մաժինյան

LinkedIn **հարթակում անձնական էջի** **հղումը**

«Զեթ Ընդ Էյ» ՍՊԸ տնօրեն: Ունի ավելի քան 16 տարվա աշխատանքային փորձ մանրածախ առևտրի ոլորտում. զբաղեցրել է սպասարկող-գործակալի (2008-2009 թթ.), գանձապահ-օպերատորի (2009-2011 թթ.), վարիչի (2008-2009 թթ.), օպերացիոն մենեջերի (2015-2022 թթ.), փոխտնօրենի (2022-2023 թթ.), տնօրենի (2023 թ.-ից առ այսօր) հաստիքներ «Զեթ Ընդ Էյ» ՍՊԸ-ում: 2019 թ.-ից մինչ այսօր հանդիսանում է ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի դասախոս: Համագործակցում է համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի բրենդների հետ, ինչպիսիք են՝ Burberry, Zegna, Armani, Ralph Lauren, Boss, Azat Mard և այլն: Ունի տնտեսագետի որակավորում (ՀՊՏՀ), գործարար վարչարարության մագիստրոսի կոչում (International University of Applied Sciences, Բադ Հոննեֆ, Գերմանիա): 2023 թ.-ին հաջողությամբ ավարտել է MIT Management-ի կողմից կազմակերպված «Mastering negotiation and influence» որակավորման դասընթացը:

Հերմինե Պողոսյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

Շվեյցարիայի (Ժնև) Swiss School of Business and Management (SSBM) դոկտորանտ՝ 2024թ.-ից, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Հավատարմագրման Ազգային Մարմնի փորձագետ՝ 2022թ.-ից, Marketing Surgeon մարքեթինգային ընկերության հիմնադիր՝ 2021թ.-ից, ՀՊՏՀ Մարքեթինիգի ամբիոնի դասախոս՝ 2019թ.-ից: Ունի 19 տարվա աշխատանքային փորձ՝ մարքեթինգի, հանրային կապերի, վաճառքի, մերչանդայզինգի և մի շարք այլ ոլորտներում՝ մասնավոր և պետական:

Մերի Պետրոսյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

Համալսարանում աշխատում է 2012 թվականից: 2018 թվականից մինչ օրս մարքեթինգի ամբիոնի դասախոս է, տնտեսագիտության թեկնածու: 2018-2024 պարբերաբար մասնակցել է որակավորման բարձրացման վերապատրաստումների: Մագիստրատուրայում դասավանդում է «Անհատների և իրադարձությունների մարքեթինգ» դասընթացը:

Աշոտ Բարսեղյան

LinkedIn **հարթակում անձնական էջի հղումը**

P-Art PR և մարկետինգ գործակալության գործադիր տնօրեն, Sequoia MS բրենդինգային ընկերության հիմնադիր և տնօրեն, Կարեն Վարդանյանի անվ. Կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Ամստերդամի «FORWARD INC.» ստարտափ ինկուբատորի միջազգային մենթոր: 2005-ին DigitecExpo միջազգային ցուցահանդեսի հիմնադիրներից է, 2006-2008թթ տնօրենը, 2009թ-ից հիմնադրել և ղեկավարել է Ucom ընկերության Մարկետինգի բաժինը, ապա բրենդի զարգացման և հաղորդակցության բաժինը, 2020-ից հիմնադրել և ղեկավարել է Թիմ ընկերության Բրենդի զարգացման և հաղորդակցության բաժինը, ղեկավարել Beeline-ի ռեբրենդինգը դեպի Team Telecom Armenia: Զբաղվում է հասարակական գործունեությամբ, Սմարթ Արմենիա Հիմնադրամի համահիմնադիրն է: 2020-2021թթ ղեկավարել է Հայաստան համահայկական հիմնադրամի հանրային կապերի բաժինը: Կրթությունը ստացել է Համբուրգի, Բոստոնի, Կահիրեի, Երուսաղեմի և Երևանի առաջատար դպրոցներում և համալսարաններում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մարքեթինգային հաղորդակցություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է մարքեթինգային հաղորդակցությունների կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործնական գիտելիքներով և կարողություններով մասնագետներ, որոնք մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում՝ մասնավոր, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, գիտական, նախագծային կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում:

շրջանավարտներ

Աշխատաշուկայում՝ մարքեթինգային գործունեություն և մարքեթինգային հաղորդակցություններ իրականացնող առաջատար ընկերություններում, շրջանավարտները կարող են զբաղեցնել այնպիսի հաստիքներ, որոնք պահանջում են մարքեթինգային, տնտեսագիտական, կառավարման և գործարարության համաժամանակյա ունակություններ և խորը գիտելիք: